



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 22 ՄԱՅԻՍ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐԹ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 34 ԳՈՂՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անդադար Տէրը պիտի օրհնաբանեն,
անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:
Տէրն է միակ պարծանքս. թող քառապեալներ լսեն եւ ուրախանան:
Ինձի հեղ Տէրը փառաւորեցէք, միասնաբար Անոր անունը փառաբանեցէք:
Եւ Տիրոջ դիմեցի, եւ աղօթքիս պարասխանեց, զիս ազատեց բոլոր վախերէս:
Տիրոջ մօտեցէք, որպէսզի ուրախութեամբ ճառագայթէք, եւ յուսախաբ չէք ըլլար բնաւ:
Ես՝ քառապեալս՝ Տիրոջ դիմեցի, եւ անկեալ խնդրանքս լսեց, զիս ազատեց բոլոր նեղութիւններէս:
Տիրոջ հրեշտակը աստուածավախ մարդոց կողքին պահակ կը կանգնի,
եւ փորձանքներէն զանոնք կ'ազատէ:
Ճաշակեցէք, եւ րեստէ՛ թէ ինչքան քաղցր է Տէրը. երանի անոր՝ որ Տիրոջ կ'ապաւինի:
Տիրոջ երկիւղը ունեցէք, որոք ով սուրբեր. Անոր երկիւղը ունեցողները ոչ մէկ բանի կարօտ բն:
Հօրազոյն մարդիկն իսկ կարօտութեան եւ անօթութեան կրնան մարմնուիլ,
սակայն Տիրոջ դիմողները բանի մը կարօտ պիտի չմնան:
Եկէք, որդեակներ, մօտիկ ըրէք ինձի, եւ ես ձեզի սորվեցնեմ՝ թէ ինչ է Տիրոջ վախը:
Կուգե՛ս երկար կեանք ունենալ, կուգե՛ս բարօր օրեր րեսնել:
Լեզուդ չարախօսութեան մի ծառայեցներ, շրթներդ բնաւ թող նենգութիւն չխօսին:
Հեռու մնայ չարիքէն, եւ բարիք ըրէ, խաղաղութիւն կամեցիր եւ զայն հեղապնդէ:
Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն, ականջները միշտ պարտասար են անոնց աղաչանքը լսելու:
Մակայն Տէրը հակառակ է չարագործներուն, որոնց յիշարակն իսկ պիտի ջնջէ այս աշխարհէն:
Երբ արդարը օգնութիւն կ'աղաղակէ՝ Տէրը կը լսէ, եւ զայն կ'ազատէ իր բոլոր նեղութիւններէն:
Տէրը պարտասար է սրտաբեկներուն օգնելու, փրկելու յուսալքուած հոգիները:
Արդարին նեղութիւնները որքան ալ շար ըլլան, Տէրը կ'ազատէ բոլորէն ալ,
եւ զայն անվնաս կը պահէ, թոյլ չբալով որ մէկ ոսկորն իսկ փշրուի:
Չարը իր չարութեան պարճառով պիտի մեռնի, արդարը արողները իրենց պարիժը պիտի կրեն:
Տէրը կը փրկէ իրեն ծառայողները. դարապարտութիւն պիտի չունենան անոնք՝ որոնք իրեն կ'ապաւինին:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐԹ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնս ես նեղեղոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ է՛ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ է՛ն արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Քանի մը մասերէ բաղկացած այս Սաղմոսը մեզի կը ներկայացնէ հետեւեալ կէտերը:

1 հմր խոստում:

1. Տէրը օրհնաբանելու եւ Անոր օրհներգութիւն միշտ շրջներուն վրայ ըլլալու:

2-3 հմր վկայութիւն եւ հրաւեր, կեանիք փորձառութեան լոյսին փակ:

1. Միակ պարծանքը Տէրն է:

2. Ինք եւս որպէս փառապէալ վկայութիւնը կու փայ, եւ բարի լուրը կը փոխանցէ:

3. Կը հրաւիրէ իրեն հետ միասին Տիրոջ անունը փառաբանելու:

4 հմր վկայութիւն:

1. Տիրոջ դիմեց, եւ անպարասիսան չմնաց:

2. Տիրոջ դիմեց, որպէսզի Տէրը զինք ազարէ բոլոր վախերէն:

5 հմր հրաւեր:

1. Հրաւեր կոչ Տիրոջ մօտենալու, որպէսզի ուրախութեամբ ճառագայթեն, եւ յուսախար չեն ըլլար:

6 հմր կեանքի փորձառութեան վկայութիւն:

1. Ինքն ալ արեւնօք փառապէալ մըն էր, եւ երբ դիմեց Աստուծոյ, Աստուած զինք ազարեց նեղութիւններէն: Ուրեմն, Աստուած կը լսէ եղեր:

7 հմր Փորձանքները կան ու պիտի ըլլան, բայց Աստուծոյ խոստումն է, որ այդ փորձանքներէն ազարէ աստուածավախ մարդիկը:

8 հմր մէկ այլ ուրիշ հրաւեր, ոչ միայն Տիրոջ մօտենալու, այլ՝ զԻնք ճաշակելու: Անոր քաղցրութեան վայելքը ունենալու: Երանութեան մէջ ըլլալու, երբ Անոր կ'ապաւինինք:

9-10 հմր Տիրոջ երկիւղը ունենալու հրաւեր, եւ այդ երկիւղին պարուղը քաղելու, ոչ մէկ բանի կարօք ըլլալու: Հօրագոյն մարդիկ կրնան անօթութեան կրնան մարմուխի, բայց Տիրոջ դիմողները՝ ոչ մէկ բանի:

11-14 հմր իմաստը Աստուծոյ երկիւղը ունենալու, Աստուածավախ ըլլալու:

1. Երկար կեանք ունենալ բարօր օրեր փեսնել, բոլորիս փափաքն է:

2. Լեզուն չարախօսութեան համար չօգտագործել:

3. Շրջները նենգութեամբ չխօսելու:

4. Հեռու մնալու չարիքէն, եւ բարիք ընելու:

5. Խաղաղութիւն կամենալու եւ զայն հետապնդելու:

15-17 հմր կը վարահեցնէ, որ Տիրոջ աչքերը կը փեսնեն, ու մանաւանդ՝ կը հսկեն, իսկ ականջները կը լսեն, ու Տէրը պարբարապ է արդարին օգնութեան հասնելու եւ զինք ազարելու բոլոր նեղութիւններէն: Բայց Տէրը հակառակ է չարագործներուն, որոնց յիշարակը պիտի ջնջէ այս աշխարհէն:

18-20 հմր Տիրոջ պարբարակամութիւնը օգնելու սրտաբեկներն ու լուսալքուածները, որքան ալ շար ըլլան այդ նեղութիւնները, Տէրը պարբարապ է ազարելու: Նեղութեան շարութիւնը երբեք ալ արգելք չէ: Եւ ահա այդ խոստումին իրականացումը փեղի ունեցաւ խաչելութեան պահուն, երբ թոյլ չարուաւ, որ մէկ ոսկորն իսկ փշրուի:

21 հմր չարերը եթէ պիտի կորսուին, իրենց չարութեան պարճառով: Քրիստոս պիտի ըսէ, Յովի 3:16, «Ով որ հաւարայ Անոր պիտի չկորսուի, իսկ ով չի հաւարար Անոր արդէն իսկ դարապարտուած է, չհաւարալուն համար»: Չարերն ալ իրենց չարութեան համար:

22 հմր իսկ Տիրոջ ծառայողներուն եւ ապաւինողներուն համար դարապարտութիւն չկայ, Պօղոս Առաքեալ պիտի ըսէ, «Մահէն դէպի կեանք անցած ենք»: